Ո՞ւմ է ձերբակալել ՌՈ-ն. Ազատ Ավագիմյան անունով փաստաբան չունենք

12.06.2013 17:15

«Փաստաբանների պալատում Ազատ Ավագիմյան անունով փաստաբան չկա»,-այս մասին Aysor.am-ի թղթակցի հետ զրույցում նշեց ՓՊ նախագահ Ռուբեն Սահակյանը, նշելով, որ նման մարդ չի ճանաչում:

Հիշեցնենք, որ ՀՀ զինդատախազության կողմից ստացված հաղորդման հիման վրա, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության և ՀՀ ՊՆ քննչական ծառայության համատեղ ձեռնարկված միջոցառումների արդյունքում 12.06.13թ.-ին ժամը 11:30-ի սահմաններում կաշառք տալու և ստանալու պահին ձերբակալվել են ՀՀ ՊՆ ՔԾ 1-ին կայազորային քննչական բաժնի 2-րդ բաժանմունքի պետ, մայոր Վահան Հարությունի Հարությունյանը և փաստաբան Ազատ Վլադիմիրի Ավագիմյանը: Այս մասին տեղեկանում ենք ՊՆ մամուլի ծառայությունից:

Հարուցվել է քրեական գործ: Նախաքննությունը վարում է ՀՀ ՊՆ քննչական ծառայությունը:

Անհետաձգելի քննչական գործողությունները կատարելուց հետո քրեական գործն ըստ քննչական ենթակայության կուղարկվի ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Աղբյուրը՝
http://www.aysor.am/am/news/2013/06/12/ruben-sahakian/

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })